



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material






23544

23545

323.1(4T.925)

9-44





Միշտ ինքնա ջերմ

Թե ինչ շահագրգռված

Պերժիկ պեղանազույգել

Երկրորդ սրբայ

Կարգադրանք սրբայ

Տեսչության քարտեզային

- 1878 -

2004



## ԱՌ ԲԱՐՁՐԱՇՆՈՐՀ

## ՏԷՐ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

Ձեզ կը ձօնեմ այս էջեր , որք Ձեզ կը պարտին իւրեանց գոյութիւն : Դարերէ ի վեր , հայութիւնն մի կրօնական ժողովուրդ կը ձեւացունէր , և Դուք մի քաղաքական ազգի վերածեցիք 'զայն , անվեհեր պաշտպանելով իւր դատ եւրոպական աշխարհին առջև : Հիւանդութիւնն կը սպառնար Ձեզ , Դուք մահին սպառնացիք . վսեմ եղաք Դուք : Թէ մեր պապեր ականատես լինէին Ձեր գործի , Մեծն Ներսէս պիտի համարուէր Ձեր ճակատ և Վարդան պիտի ծնրադրէր Ձեր առջև : Ս.Ս. , որպէս զի կատարեալ լինէր Ձեր փառք , ապերախտութիւն ալ գտաք : Ներկայն չը վարձատրեց ըզ Ձեզ լիապէս , որպէս զի չպագայն շնորհասպարտ միայ Ձեզ . և ապագայն պիտի կանդնէ Ձեզ մի արձան , ոյր պատուանդանի քարերէն մին է դուցէ այս անշուք տետրակ :

24276-u.2

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

~~3449-55~~

9



## ՆԱԽԱԲԱՆ

Բարձրաշնորհ Պատրիարքն , Տարօնի արքեպիսկոպոս և նախկին պատրիարք Պերճաշնորհ Տ. Մկրտիչ Խրիմեանն յղելով Եւրոպա իբր ազգային պատուիրակ , 'գլխ թարգման և քարտուղար կարգեց նմա , նաև քարտուղար Պէշիկթաշի արքեպիսկոպոս Պերճաշնորհ Տ. Խորէն Նար Պէշի , որ , իբր ազգային պատուիրակ , միացաւ մեզ Պերլինի մէջ , 1878 յունիս 2էն մինչև յուլիս 5 : Մարտ Ցին մեկնեցանք , և յուլիս 30ին վերադարձանք Կոստանդնուպօլիս :

Հնգամսեայ պաշտօնավարութիւնս առիթտուաւ ինձ ներքնասէս տեղեկանալ ազգային դասին , և մտադիր էի սիրելի ազգիս պատմել , իբր ախանատես վկայ , այն դորձեր 'զորս գործեցին հայ պատուիրակներն , աւետիսներ բերելով նմա , որ , աւա՛ղ , գոյժ կ'առնու սաէպ : Սակայն , առողջական վիճակս զեռ չը ներելով ինձ ձեռնարկել այդ աշխատանքի , և նկատելով որ անստուգութիւնն , 'զոր շարաշար կը գործածեն մի քանի մուրեաւներ , կը վրդովէ մեր ժողովուրդ , որ լուր կը հարցնէ ազգային



դատին նկատմամբ և կ'ուզէ խմանալ թէ ինչ  
շահեցանք Պէրլինի վեհաժողովէն, կը փութամ  
պատասխանել ներկայ գրքչկովն, սերմէն յա-  
ռաջ պտուղն ցոյց տալով նմա :

Աւելիմ ընթերցողն պիտի զգայ թէ, այս գոր-  
ծի մէջ, շանացած եմ խօսիլ իրր պարզ պատ-  
միչ և չը շեղիլ դիւանագիտական լեզուէն, որ-  
պէս կը պահանջէ այն պաշտօն 'գոր վարեցի :

Յրի'նկիրօ, 21 սեպտեմբեր 1878.

ՄԻՆԱՍ ՉԵՐԱԶ





# ԹԻ ԻՆՁ ՇԱՀԵՑԱՆՔ

## ՊԵՐԼԻՆԻ ՎԵՀԱԺՈՂՈՎԷՆ

### Ա.

Ի՞նչ է այս վհատութիւն 'զոր կը նշմարեմ  
ազգիս վրայ : Միթէ ներելի՞ է յուսահատիլ մի  
ժողովուրդի որ կը հաւատայ թէ ապագայ ու  
նի :

Պայթած էր երկրորդ պուճիկեան պատե-  
րազմն : Ամիլիարի կորիւնն , Աննիրաւ , կ'արշա-  
ւէր Իտալիա , Հռոմի դէմ հանելով Եւրոպան  
և Ափրիկէն : Արդէն Հռոդանոսի յաղթական  
անցքն տեղի ունեցած էր . Սկիպիոն կրած էր  
մի ծանր պարտութիւն , Սեմպրոնիոսի բանակն  
ջախջախուած էր , Փլամինիոս անկած էր իւր  
լեղէոններով , Փարիոսի ճարտարութիւնն ի դե-  
րեւ ելած էր և Մինուկիոսի հեծելազօրն խոր-  
տակուած : Հռոմ սուղի և սարսափի մատնուած  
էր : Տերենտիոս Վարրոն , որ 218ին հիւսպա-  
տոս ընտրուեցաւ ժողովուրդէն , Պողոս—Նմիլի-  
ոսի խրատին չ'անսալով և յուսալով յաղթել  
թշնամին , ճակատեցաւ կարճեդոնի աննկուն  
զօրապետին դէմ : Իւր բանակ կրկնապատիկ ա-  
ւելի բազմաթիւ էր Աննիրաւի բանակէն . 8000



ճիւղեր ունէր և 80000 հետևակ : Այլ վարրոն  
յաղթուեցաւ չարաչար, 10000 զերի և 73000  
զոհ տալով, մինչ Աննիբալի կորուստն էր 5500  
հոգի : Ստորին իտալիա և Սիկիլիա, լսելով Հռոմի  
պարտութիւնն, յաղթականին յարեցան, և  
Քալլիա գերեզման եղաւ մի լեզէոնի 'զոր ծերա-  
կոյտն յղած էր անդ :

Յաւիտենական քաղաքն անդրդուելի մնաց  
այս անեղ ձախողանքի մէջ : Երբ վարրոն վե-  
րադարձաւ անդ, իմաստուն ծերակոյտն, 'զոր  
Կինէաս արքայածողով հռչակած էր, դիմաւո-  
րեց 'զայն ամբողջ ժողովուրդին հետ և շնոր-  
հակալիք յայտնեց նմա հանդիսապէս, զի հասար-  
ածեցած էր հայրենիքն զրայ :

Վեհածողովէն յետոյ, մեր ազգ այդպէս  
պարտաւոր էր վարուիլ Ներսէս վարժապետ-  
եանի հետ, երբ Պէրլին ջնջած իսկ լինէր Հա-  
յաստանի յոյսերն : Սակայն ուրախ եմ որ ազգս,  
ոչ լմիայն մնաս չը կրեց, այլ մեծապէս շահե-  
ցաւ Պէրլինի վեհածողովէն :

'Զայս հաստատելէ յառաջ, թող ներուի ինձ  
պաշտօնական աղբիւրներէ քաղելով պատմել  
թէ ինչ վճռած է եւրոպական դիւանագիտու-  
թիւնն ազգային դատին նկատմամբ :

Բ

Երբ Ռուսաստան պատերազմ հրատարակեց  
Սուլթանին դէմ, յայտարարեց թէ նպատակ  
ունի փրկել Տաճկաստանի քր'ատոնեայ ժողո-  
վուրդներն : Արկար մարտերէ յետոյ, մահիկն



խոնարհեցաւ արծիւին առջև : Մի դաշնագիր  
խմբագրուեցաւ . հայ ժողովուրդն՝ մտնուած  
էր , երբ Բարձրաշնորհ Պատրիարքն , յազժա-  
կանին ղիմելով , թախանձեց յանուն քրիստոն-  
եայ Հայաստանի , ում համար խնդրեց վարչա-  
կան ինքնօրինութիւն : Ահա ժողովի անդրանիկ  
նիստին մէջ , իշխան Աօրչազով հռչակեց և  
կրկնեց թէ՛ ուսու կառավարութիւնն ինչ նպա-  
րակ ունի քրիստոնեայ ազգերին թիւնքեն քոչման  
ապահովել և երաշխաւորել ամբողջս . այլ այդ կա-  
ռավարութիւն , ինքնօրէն գոյութիւն չ'ապահո-  
վելով մեզ Սան—Սթեփանօի դաշնագիրին մէջ ,  
որ փետրվար 18ին ստորագրուեցաւ , հետա-  
գայ յօդուածն միայն շնորհեց մեզ .

« Յօդուած 16 . Քանի որ , երբ ուսու գուն-  
դերն մեկնին այն երկիրներէ՝ 'գորս գրաւած  
են Հայաստանի մէջ և որք Տաճկաստանի պիտի  
թողուին , կրնան տեղի ունենալ անդ կռիւներ  
և խառնակութիւններ որք խանդարեն լաւ յա-  
րաբերութիւններն երկու աշխարհների , Բարձ-  
րագոյն—Դուռն յանձն կ'առնու անյապաղ ի-  
րացունել այն բարւոքումներ և բարէնորոգում-  
ներ 'գորս կը սլահանջեն տեղական պէտքերն  
Հայերէ բնակուած նահանգներին մէջ և երաշ-  
խաւորել նոցա ապահովութիւն Քուրդերին և  
Չէրզէսներին ղէմ : »

Կոմս Իկնազիկով և Պ. Նէլիտով գիտէին թէ  
Անկլիա , որ իրական շահեր ունի Հայաստանի  
մէջ , գոհ չը պիտի վնէր այս յօդուածի առա-  
ջին մասէն :



Գ.

Սուղպէրի, արտաքին նախարարի պաշտօնն ստանալով, մարտ 20ին հրատարակեց իւր մեծահռչակ շրջաբերական, որով կը հերքէր Սան - Սթէֆանօի դաշնագիրն : Այս պաշտօնագիր կը պարունակէր հետագայ հատուածն, որ մեզ կը պատկանի .

« Ռուսաստան, Հայաստանի բերդերն գրաւելով, այդ նահանգի ժողովուրդին վրայ սխախտարած է իւր ազդեցութիւն, մինչ, Քուրդաստանի մի մասին տիրելով, պիտի կարենայ, երբ ուզէ, իւր առևտրական եղանակի արգելիչ պատուարներովն կասեցունել այն եւրոպական ընդարձակ վաճառականութիւն որ այժմ Տրասպիզոնէն կ'անցնի Գարսիաստան : »

Կորչագօլ, մարտ 28ին պատասխանելով շրջաբերականին, կը կեղծէ չ'ըմբռնել նախորդ հատուածի ոգին, որ ըզմեզ կ'ակնարկէ : Ահա իւր բառեր .

« 10. Այն երկիրներ, 'զորս գրաւեցինք Հայաստանի մէջ, մի պաշտպանօղակիան արժէք միայն ունին : Անկլիա գուցէ նախընտրէր տեսնել որ Քուրդին մնային այդ հզօր վայրեր . սակայն, նոյն պատճառներովն, Ռուսաստան կտրիւոր կը դատէ ստանալ 'գայնս իւր յատուկ ապահովանքի համար, որպէս զի չը ստիպուի պաշարել 'գայնս անձնիւր պատերազմի մէջ, Կարաի բերդին պէս, 'զոր պարտաւորուեցաւ Քրեք անդամ տանուլ կէս դարի միջոցին մէջ : »

Այլ Սուղպէրի գանդատած էր թէ Ռուսաս-



տան « Հայաստանի . . . ժողովուրդին վրայ պիտի տարածէ իւր ազդեցութիւնն » . այս կետի առջեւ կորչագօվի լռութիւնն չը պիտի կարենաք գոհացունել բրիտանական կառավարութիւնն :

Դ.

Շուվալով և Սուլպէրի մայիս 18ին ստորագրեցին մի յիշատակագիր , ուր նշանակեցին թէ ինչ ընթաց պիտի բռնէին ապագայ Ահաժողովին մէջ , համաձայն կարգող բեւով իւրեանց մէջ մի քանի կարէւոր խնդիրներ : Այս պաշտօնագիրը պարունակէր հետագայ հասուածներն , որք մեզ կը պատկանին .

« 7. Սան—Սղէֆանօի նախագիծ դաշնագրին մէջ Հայաստանի համար արձանագրուած խոստումներն միայն Ռուսաստանի չը պիտի արուին , այլ նաև Անկլիաի :

Թէև բրիտանական կառավարութիւնն կը հաւանի չը հակառակիլ ձարի փափագին , որ է գրաւել Պաղուսի նաւահանգիստն և պահել իւր երկրակալութիւնը Հայաստանի մէջ , այլ հաւանական կը նկատէ որ ասիական Տաճկաստանի ժողովուրդներն վրդովօղ ծանր վտանգներ կարենան ապագային մէջ ծագիլ ուս սահմանազլութի տարածումն : Սակայն բրիտանական կառավարութիւնն կը կարծէ թէ օսմանեան կայսրութիւնն այս վտանգ է զերծ պահելի պարտն , զոր այսուհետև Անկլիա պիտի ստանձնէ յատկապէս , պիտի կարենայ կատարուիլ մի նոր պատերազմի աղէտներն կրել չը տալով Եւրոպաի : »



Ուրեմն, Վեհաժողովի գումարումն յառաջ,  
սուս կառավարութիւնն բրիտանական աւիւծին  
յանձնած էր ըզմեզ:

Ե.

Վեհաժողովն յունիս Վին գումարուեցաւ  
Պէրլինի մէջ, պաշտօն ունենալով սրբագրել  
Սան—Սիէֆանօի դաշնագիրն:

Հասերկուերորդ նիստին մէջ, որ տեղի ու-  
նեցաւ յունիս ՉՉին, Սնկլիա Վեհաժողովին  
ներկայացուց հայ խնդիրն: Ահա այն բառակ-  
ցութիւն որ տեղի ունեցաւ ազգային դատին  
նկատմամբ.

« Լորտ Սոլզպլերի կ'առաջարկէ յայժմամբ  
գրադիլ Սան—Սիէֆանօի դաշնագրի թՊ յօդ-  
ուածովն, որ Հայաստանի կը պատկանի: Ասե-  
մաւիայլ լորտն պատրաստ է ընդունիլ այս յօդ-  
ուածի երեք յետին տողերն ոյց շարժառիթ են  
այն բարւոքութներ և բարէնորոգումներ 'զորս  
Հայերն պիտի ստանան, թէ վեհաժողովն հա-  
ւանի բառնալ երեք առաջին տողերն որք գու-  
ցէ ենթադրել ասն թէ սուս դունդերն չը պի-  
տի մեկնին մինչև որ Բարձրագոյն—Դուռն չը  
չնորհէ այդ բարէնորոգումներ: Ապա թէ ոչ  
լորտ Սոլզպլերի Հայերին համար մի յատուկ  
յօդուած պիտի առաջարկէ ուրիշ անգամ: »

Կոմս Շուվալօֆ, չը պնդելով մի պայքարի  
գրայ ում այսօր պատրաստուած չ'է բնաւ, կը  
վախէ սակայն թէ մի' գուցէ սուս դունդերի  
մեկնումն, երբ խոստացուած բարւոքութների



հաստատու մէն յառաջ տեղի ունենայ, ծանր  
չփոթեներ պատճառէ : Եսեւ կը խնդրէ յետաձը-  
դել ամեն գիտողութիւն մինչև այն ժամանակ  
ուր վեհածողովն աւելի կատարելասցէս սկիտի  
դրադի Հայաստանի խնդրի վն »

Տառչարսերորդ նիստին մէջ, որ տեղի ունե-  
ցաւ յունիս 24ին, Ալեհածողովն դրազեցաւ  
հայ խնդիրովն : Ահա այն բանակցութիւններ  
որք տեղի ունեցան ժՁ յօդուածին նկատ-  
մամբ .

« Օրակարգն կը պարուենսկէ այն խնդիրներ  
որք ասիական երկիրներին կը պատկանին : Սան-  
—Սդէֆանօի դաշնագիրն իւր ժՁ, ժԸ և ժԹ  
(հատուած Բ.) յօդուածներն մէջ նշանակած է  
այդ խնդիրներ : Նախագահն (իշխան Պիլմարք)  
կը կարծէ թէ պէտք է ժՁ և ժԹ յօդուածներն  
միայն քննել այսօր, ժԸ յօդուածն, որ խօսուր  
քաղաքին կը պատկանի, վերատրահելով այն  
նիստի ուր ներկայ սկիտի լինի Մելքում—Թսն »

Լորտ Սոլլոյէրի փափազին համեմատ, Ալե-  
հածողովն կ'որոշէ գրադիլ նախ ժԹ ԲՅ յօդուա-  
ծովն, որ Արտահանի և Կարսի կը պատկանի : »

« Բարձր Ժողովն կ'անցնի ժՁ յօդուածին,  
որ կը պատկանի Հայերին և որ յիշատակուած  
է արդէն մի նախորդ նիստի մէջ :

Լորտ Սոլլոյէրի այս նկատմամբ ներկայա-  
ցուցած է մի առաջարկ որ հաղորդուած է վե-  
ազօրներին : Ասեմափայլ Լորտն կը խնդրէ որ  
բարձուին ժՁ յօդուածի առաջին տողերն մինչև  
« աշխարհների » բառն և կը ցանկայ յօդուածին



վրայ յաւելել հետագայ պարբերութիւնն :

Նա զիս զէց սորոգրել պետութիւններն հետ  
համայն պիտի որոշե այսուհետև այդ յանձնատու  
ուսման և այն միջոցներ սրտ հարկատու են որպէս շէ  
քու քրտորոսի :

Վսեմափայլ լորտն կը յաւելէ թէ պէտք է  
պաշտպանել Հայերի շահերն , և թէ իւր առա-  
ջարկի նպատակն է թէ՛ անմիջական բարւոքում-  
ների և թէ՛ ապագայ առաջդիմութիւնների յոյ-  
սեր տալ նոցա :

Քարաթէոսորի—Բաշա կ'ընդունի թէ , վեր-  
ջին պատերազմին մէջ , աննուաճ ցեղերն ծանր  
անկարգութիւններ հանած են . այլ Գուռն ,  
նոցա տեղեկանալէ յետոյ , միջոցներ ձեռք առ-  
աւա իսկոյն որպէս զի վախճան տայ նոցա :  
Կ'երեւի թէ լորտ Սուլպէրի առաջարկն ապա-  
գայ միջոցներ կ'ակնարկէ : Քարաթէոսորի—  
Բաշա կ'ուզէ որ նկատառուին այն տրամադրու-  
թիւններ 'զորս Գուռն ընդունած է , և հատ-  
ուածին վրայ յաւելուին հետագայ բառերն .  
« Գուռն վեց պետութիւններին պիտի հաղորդէ  
այն միջոցների արդիւնն որք արդէն ձեռք առ-  
ուած են այս նկատմամբ : » Այս յաւելում թէ՛  
օսմանեան կատարութիւնն կը գոհացունէ և  
թէ՛ կ'ամբողջացունէ այն գրուածի իմաստն 'զոր  
անկախան լիազօրներն կը ներկայացունեն :

Կոմս Շուվալով կը նախընտրէ լորտ Սուլպէրի  
դրուածն : Թէ Գուռն ձեռք առած է միջոցն  
որք չ'են դորձադրուած , անօգուտ է յիշատա-  
կել 'զայնս :



Նախագ ահն դիտել կը տայ թէ գուցէ դժար է  
զսպական միջոցներ գործադրել անկախ ցե-  
ղերի մէջ, և Բարձրապատիւ իշխանն տարակու-  
սելի կը գտնէ այն յօդուածի գործնական ազ-  
դուութիւնն 'զոր կ'առաջարկէ լորտ Սուլպէրի :

Գարաթէոսօրի—Բաշա պնդելով այն յաւե-  
լումի վրայ 'զոր նշանակած է, լորտ Սուլպէրի  
կը խնդրէ յետաձգել պայքարն որպէս զի փո-  
փոխէ նախնական բնագիրն :

Խնդիրն կը թողուի մի մօտաւոր նիստի :

Տասնհինգերորդ նիստին մէջ, որ տեղի ունե-  
ցաւ յունիս 26ին, հայ խնդիրն ներկայացաւ  
Վեհաժողովին Սահա ատենագիրն 'զոր կը թարգ-  
մանեմ :

« Նախագ ահն օրակարգի յաջորդ կետին  
կ'անցնի և դիտել կը տայ թէ լորտ Սուլպէրի  
յանձն առած է բարձր ծողովին հաղորդել ար-  
դիւնն այն համաձայնումի 'զոր պիտի ունենար  
օսմանեան լիազօրներին հետ ԺՂ յօդուածի  
խմբագրումին նկատմամբ, որ Հայերին կը պատ-  
կանի :

Լորտ Սուլպէրի կը կարդայ այն յօդուած  
'զոր համաձայն խմբագրած են բրիտանական և  
թուրք լիազօրներն :

Բարձրագոյն—Դառան յանձն կ'առնու անշատազ Բ-  
րադուանել այն Բարաօրումներ և Բարեկորօհումներ 'զորո-  
կը պահանջեն արեւելեան ուկրաինն Հայերէ Բնակաւած  
Դահանգներին Տեղ և Երաշխասարել նոցա ապահովու-  
թիւն վարդերին և Չերքեաներին դեմ : Նա այս նպա-  
տակէ հոժար յերտ առսած Տեղացներն պարբերապէս



դիտի շանջնացանէ պետութիւններին , որտ պիտի «կեն  
նցա զրայ :

Վեհաժողովն իւր հաւանութիւնն կը տայ այս  
յօդուածի : »

Տասութերորդ նիստին մէջ , որ տեղի ունեցաւ  
յունիս 29ին , Ֆւանսական երրորդ լիա-  
պօրն մասնապէս կարդաց նոր դաշնագիրն :  
Ատենագիրն կը սարունակէ հետագայ տողերն ,  
որք՝ մեզ կը պատկանին .

« Այն հաստուածների ընթերցումէն յետոյ  
որք խօսուրի և Հայերին կը պատկանին , ձեւա-  
կան դիտողութիւններ միայն տեղի ունեցան  
նոցա դէմ : »

## 2.

Արդէս նախորդ վկայութիւնն կը հաստատէ,  
Վեհաժողովն այդ նիստի մէջ մեր յօդուած  
բարէփոխեց գրէթէ խմբագրական դիտողու-  
թիւններով : Ահա ուրեմն այն յօդուած 'զոր  
Պլլիինի դաշնագիրն կը շնորհէ հայ ազգին .

« Յօդուած 61. — Բարձրագոյն — Գուռն յանձն  
կ'առնու անյապաղ իրացունել այն բարւոքում-  
ներ և բարէնորոգումներ 'զորս կը սահանջեն  
տեղական պէտքերն Հայերէ բնակուած նա-  
հանգներին մէջ և երաշխաւորել նոցա ապահո-  
վութիւն Չլոգէսներին և Քուրդերին դէմ : Նա  
այս նպատակի համար ձեռք առուած միջոցներն  
պարրերասպէս պիտի ծանօթացունէ պետու-  
թիւններին , որք պիտի սկեն նոցա դորձադրու-  
մի վրայ : »



Յայտ է թէ նոր դաշնագիրն ստորագրուեցաւ յուլիս 1ին :

Է՛


Ի՞նչ տարբերութիւն ունին հայ ազգին համար Սան—Սդէֆանօի եւ Պէրլինի դաշնագիրներն : Ս,հա այն խնդիր որով պիտի գրադիմ այժմ :

Որպէս յայտնեցի արդէն, մեր շատ աւելի շահեցանք Պէրլինի քան Սան—Սդէֆանօի մէջ, եւ անհնար էր աւելի շահիլ լեզուով եւ գրիչով :

Սան—Սդէֆանօի յօդուածն աղաչանքներէ ծնած էր. Պէրլին ամբաստնեց 'զայն իւր վեհալճիւնով :

Սան—Սդէֆանօի յօդուածովն, Ռուսաստան միայն պարտա կը դնէր Տաճկաստանի վրայ հայ ժողովուրդին նկատմամբ. Պէրլինի յօդուածովն, Սէֆմանիա, Աւստրիա—Հունգարիա, Գրանասա, Մեծն—Բրիտանիա, Իտալիա և Ռուսաստան միացան նոյն դործին համար :

Սան—Սդէֆանօի յօդուածովն, Բարձրագոյն Գուռն յանձն կ'առնուր պաշտպանել Հայերն անդ ուր բանակած էին ռուս զուեղերն. այս խոստում Հայաստանի մի փոքր մասին համար էր, Կարինի համար, և շատ դիւրին էր Տաճկաստանի կատարել 'զայն. մի ստիկանական կարգադրութիւն կը դաւէր որպէս զի տեղի չ'ուներնային «կռիւններ» Վարդապետութիւններն : Պէրլինի յօդուածովն, Բարձրագոյն Գուռն յանձն առաւ պաշտպանել Հայերն ամենուրեք :



21955  
55616



ամեն հայարեակ նահանգի մէջ, ամբողջ Հայաստանի մէջ. նա հարկադրուեցաւ խոստանալ, ոչ մի ոստիկանական կարգադրութիւն այլ ամենագան բարէնորոգ ունենալ. նա հարկադրուեցաւ պատասխանատուութիւն ստանձնել, ոչ կարիքի ներկային համար միայն, այլ Հայաստանի ներկային և ապագային համար: Տարբերութիւնն անհուն է, և մեր ազգ երախտապարտ է Սոլդակրիի: Այսօր, քանի որ ուստանակն մեկնեցաւ կարիքէն եւ օսմանեան կառավարութիւնն ձեռք առաւ միջոցներ որովք պաշտպանեց անդ հայ ժողովուրդի ապահովութիւնն, հայ խնդիրն փակուած պիտի լինէր ըստ Սան—Սդէֆանօի, մինչ, ըստ Ալրլինի, դեռ ոչ իսկ բացուած է:

Սան—Սդէֆանօի յօդուածովն, Քարճրադոյն Գուռն Բուսաստանի կը խոստանար պաշտպանել Հայն Քուրդին ևւ Արդէսին դէմ. կանդիւանագէտներ որք կը մտածեն թէ ուստ կառավարութիւնն, երկրակալական նպատակներք ունենալով օսմանեան Հայաստանի նկատմամբ, շատ արամադիր չը պիտի լինէր այդ խոստումի իրացումն պահանջել, զի պէտք է որ քրիստոնէայիներն զուհացուցիչ վիճակ չը փայելեն որպէսզի կարենայ վերածնիլ արեւելեան խնդիրն: Ալրլինի յօդուածովն, Քարճրադոյն Գուռն կը բողոքի խոստացաւ պաշտպանել Հայն Քուրդին ևւ Արդէսին դէմ. և պէտք չ'է մտնալ թէ անդ է նաեւ Սնկիս, որ շահերն կը պահանջեն որ զոչ վնին Հայաստանի քրիստոնէայիներն, որ



այն զի եփրատեան հովիտն որս չբլի՛նի մի հարթ  
 ժողովուրդի : Սուղպէրի , Վեհաժողովէն յառաջ ,  
 Ղօնտօնի մէջ , կ'առէր մեզ . « Հաւատացէք թէ  
 Վեհափառ Թագուհին ձեզ շափ կը ցանկայ որ  
 Հայերն դոհացուցիչ վիճակ ստանան , վայելելով  
 բարէ կեցութիւն , խաղաղութիւն եւ ազատու-  
 թիւն : » Այս յայտարարութիւն անկեղծ էր , զի  
 Ալախիտնի շահերն այս կետի վրայ կը շօշափեն  
 մեր շահեր :

Սան—Սղէ Քանօի յօղուածին մէջ , մեր դատ  
 ներկայացած էր անուղղակի . մեր ազգային ի-  
 բաւունք չ'էր ներշնչած 'դայն , այլ ուսումնա-  
 նակի դիպուածական ներկայութիւնն հայ հողին  
 վրայ : Սուղպէրի , Պէրլինի յօղուածէն արտաք-  
 անելով թէ յօղուածի առաջին տողերն , ուղղա-  
 կի ներկայացուց մեր դատ , իւր հայ ազգի ի-  
 բաւունքն մի լուազոյն վիճակի : Արդարեւ , ուսում-  
 անակի մեկնումէն չը սխտի ծնէր հայ խնդիրն ,  
 նա արդէն ծնած էր այն հարստահարութիւն-  
 ներէ ոյց նշաւակ եղած եմք : Թէ Բուսաստան  
 սրահէր Հայաստանի այն մաս ուր տարածուե-  
 ցաւ իւր բանակ եւ 'դոր թողաւ Սելթանին ,  
 կ'երեւի թէ Սան—Սղէ Քանօի դաշնագիրն պիտի  
 լուծէր արեւելեան խնդիրն , հայ անունն չը յի-  
 շատակելով բնաւ :

Պէրլինի Վեհաժողովն , Սան—Սղէ Քանօի յօղ-  
 ուածն մեզ նպաստաւոր կերպով սրբազրեւէ-  
 յեաց , ստեղծեց մեզ համար մի հատուած 'դոր  
 բրիտանական երկրորդ վաղորին կը սրբափմք  
 յատկանդէս եւ ոյր կարէւորութիւնն անսահման է :

3449-53





Պէրլինի վեհաժողովն վճռեց թէ Բարձրագոյն Գուռն պարտաւոր է Եւրոպայի հաղորդել այն միջոցներ 'զորս ձեռք պիտի առնու որպէս զի Հայերն բարւոք, բարէնորոգ և ապահով վիճակ ստանան : Աւրեմն մեզ համար պատասխանատու է Գուռն այսուհետև . նա օսմանեան Հայաստանի համար համարատու է եւրոպական աշխարհին : Երբ Եւրոպա անբաւական գտնէ այդ միջոցներ, իրաւունք պիտի ունենայ պահանջել որ օսմանեան կառավարութիւնն ընդարձակէ 'զայն : Ահա մի բարիք որ չ'ունի սահման :

Պէրլինի վեհաժողովն վճռեց թէ Բարձրագոյն Գուռն պարտաւոր է Եւրոպայի պարբերապէս հաղորդել այն միջոցներ որովք պիտի բարելաւէ հայ տարրի կացութիւնն : Պարբերապէս բառն կը յայտնէ թէ Բարձրագոյն Գուռն չը պիտի կարենայ շատանալ մի անգամ ձեռք առնուլով հարկաւոր միջոցներն, այլ միշտ պիտի հարկադրուի բարէնորոգումներ շնորհել Հայաստանի, եւ, նորանոր բարէնորոգումներ, զի անհնար է որ մի դահլիճի նոյն գրուածն հաղորդէ պարբերապէս : Ահա մի բարիք որ չ'ունի սահման :

Պէրլինի վեհաժողովն վճռեց թէ վեց պետութիւններն պարտաւոր են սկել որպէս զի գործադրուին այդ միջոցներ : Արդարև, շատեր կրնային առարկել թէ Բարձրագոյն Գուռն պիտի կարենար Եւրոպայի հաղորդել և Ասիայի մէջ չը գործադրել բարէկարգական միջոցներն : այդ



կասկած փարատուած է, զի վեց պետութիւններ յանձն առին սկել: Ուրեմն Եւրոպա, 1856ի անմիջամտական ոգիէն հեռանալով, իրաւունք տտացաւ միջամտել այսուհետեւ Հայաստանի նրկատմամբ: Եռւնալօֆ, Վեհաժողովի տասութերորդ նիստին մէջ, գոչեց. «Մա՞րթ է պնդել թէ միջամտութիւն չը կայ բնաւ Տաճկաստանի մէջ, երբ բազմաթիւ եւրոպական մասնախումբներ կան Ռուսիոյ մէջ, յոյն նահանգներին մէջ, Հայաստանի մէջ, եւ» Սհա մի բարիք որ չ'ունի սահման:

Նախորդ հատուածներէն կը հետեւի թէ Պէրլինի Վեհաժողովն Սան—Սդէֆանօի դաշնագրին մէջ մեզ համար մի թուանշան չ'է տեղափոխած միայն, յօդուած 18ն յօդուած 61ի վերածելով, այլ դրած է այնպիսի հիմեր այց վրայ կրնամք վերականգնել մեր հայրենի տուն:

Ուրեմն ապարդիւն չ'են եղած այն ճիգեր 'զորս Բարձրաշնորհ Պատրիարքն եւ հայ պատուիրակներն շռայլեցին:

## Ը:

Սյն պայմանագիր, 'զոր ստորագրեցին Սնկփա եւ Տաճկաստան, մի նոր բարիք եղաւ մեզ համար:

Սուլպէրի Սըր Լէըրտի մի ընդարձակ նամակ գրեց մայիս 18ին, ոյր ոգին է մայիս 23ի Պաշտպանօղական նիզակահցութիւնն: Լէըրտ եւ Սալֆէթ ստորագրած են այս պայմանագիր, ոյր գոյութիւնն երեւան ելաւ յունիս 26ին:



Այս պայմանագիրով, Անկլիա յանձն կ'առնու միանալ Սուլթանին հետ և զկնքով պաշտպանել ասիական Տաճկաստանն Ռուսաստանի դէմ, սակայն,

«Փոխան անա, Ահհափառ Սուլթանն Անկլիաի կը խոստանայ ներմուծել այն բարէնորոգումներ ('զորս ապա պիտի որոշեն երկու պետութիւններն) որք հարկաւոր են որպէս զի լաւ վարչութիւն ըստանան և պաշտպանութիւն դտնեն ասիական Տաճկաստանի բնակիչ քրիստոնեայ և միւս հրապատակներն, և որպէս զի Անկլիա կարող լինի ապահովել այն միջոցներ որովք պիտի գործադրէ իւր յանձնառում, Ահհափառ Սուլթանն կը հաւանի նաեւ նշանակել Ախպրու կղզին, 'զոր նա պիտի գրաւէ և պիտի կառավարէ, »

Ուրեմն, այն հաւաքական պատասխանատուութիւններէ յետոյ 'զորս վեց պետութիւններն ստանձնեցին, ստացանք նաև մի անհատական պատասխանատուութիւն, 'զոր ստանձնեց Մեծն-Բրիտանիա :

Արնար գուցէ առարկուիլ թէ, որպէս կը գրէ մի Փոանսացի հեղինակ, հաւաքական երաշխաւորութիւններն աւելի երեւակայական են քան իրական, և թէ նոքա չ'ունին այն արժէք 'զոր ունի մի անհատական երաշխաւորութիւն, ոյր պաշտաւորիչ 'զորութիւնն շատ աւելի ազդու է :

Մայիս 25ի պայմանագիրն եկաւ փարատել այս երկիւղ ուրեմն, որպէս գրեցի արդէն, նա ալ օգտակար եղաւ հայ ազգին :



Թ.

Այդ պայմանագիր մի ուրիշ և մեծ օգուտ ալ պիտի կարենայ ընծայել մեզ, 'չոր գուցէ աւելորդ չը լինի նշանակել աստ :

Ռուս և բրիտանական ազդեցութիւններն պիտի մրցին այսուհետեւ Հայաստանի մէջ, և հայտարրն օգուտ պիտի քաղէ այս մրցումէ :

Ռուս կառավարութիւնն պիտի ձկտի ԿՍ. յօդուածն իբր զինք զորոճածել իւր բրիտանական օստիտի դէմ, որպէս զի բարոյապէս քայքայէ մայրս Չճի պայմանագիրն : Նա արամադիր պիտի լինի եւրոպական աշխարհին հաղորդել ամեն կեղեքում որ տեղի ունենայ Հայաստանի մէջ, պատասխանատուութիւնն յատկապէս իւր հակառակորդի վրայ ձգելով : Անկլիա, քանի որ իրաւասութիւն չ'ունի արդ ելել Հայաստանի մէջ ուրս միջամտութիւնն, 'չոր կ'արդարացունէ Պէրլինի յօդուածն, պիտի ջանայ սանձել հարստահարութիւններն, որպէս զի չը կրէ մի բարոյական պարտութիւն : Ո՛չ ապաքէն մեր ազգ պիտի օգտայս մրցումէ, քանի որ իրաւունք ունի, եւրոպայի դիմելով, նպաշտպանութիւն խնդրել Ռուսաստանէն և միւս շորս պետութիւններէն, երբ Անկլիա դարման չը տանի իւր աղէտի :

Ա. Բէզըրպուրիի կառավարութիւնն պիտի ձկտի նախանձելի հանդիսացունել իւր հայ հպատակի վիճակն, որպէս զի օսմանեան Հայաստանի շրիստոնեայիներն տենչան բախտակից լինիլ նմա : Էօնաօնի կառավարութիւնն պիտի ջանայ երջաս



նիկ օրեր պատրաստել օսմանեան Հային, որպէս  
դի գոհ լինի սա իւր վիճակէ և չը ցանկայ հալա-  
տակիլ օտարին : Ո՞վ պիտի շահի այս մրցումէ. —  
Հայն, Հայաստանի Հայն :

Եւ է՞ր այս մրցում : — Զի օսմանեան Հայաս-  
տանն, ուստի կը բխին Տիգրիս և Եփրատ, մի լեռ-  
նադաշտ է այր երկրակալումն յոյժ օգտակար  
պիտի լինի ուսս ազգին և յոյժ մնաստակար բրի-  
տանական ժողովուրդին :

Կամ Միւնսդըր, Լոնտօնի արէման դեասլանն,  
կ'ասէր մեզ. «Նա, որ կը տիրէ ակին, տիրած  
կը լինի գետին : » Գետն է Եփրատ, որ կը հոսի  
Պարսկային ծոցին մէջ, այր դիմաց կը տարածուի  
Հնդկաստան :

Այս պատճառի համար է որ, մայիս 18ի յի-  
շատակագիրին մէջ, Սօլդաէրի հաստատ խոստում  
առաւ Եւրօպոսին որ ուսս կատարուած իւնն  
ա՛լ այսուհետեւ երկիր չը խլէ Հայաստանէն :

## Ժ.

Այսպիսի առաւելութիւններէ յետոյ, ի՞նչ կը  
նշանակէ այն տխրութիւն որ կը նշմարուի ազգի  
մի մասին վրայ : Նորա, որք սեւ կը դգենուն ա-  
ջողանքին առջեւ, ի՞նչ գոյն պիտի ստեղծեն ձա-  
խողանքին համար :

Սաոյգ է թէ Բարձրաշնորհ Պատրիարքն վար-  
չական ինքնօրինութիւն խնդրեց, 'դոր նախ  
Ռուսաստան և ապա Եւրոպա գլացան մեզ. այլ  
ո՞ր այգ կատարելապէս գոհ եղաւ Ահհաժողովի  
որոշումներէն : Հոյութիւնն չ'էր կարօղ յաւակ-



նիլ մի բացառիկ վիճակի՝ :

Ռուս կառավարութիւնն , այր յաղթական բանակներն հասան մինչեւ Կոստանդնուպօլիս , խաղաղութիւն շնորհելով Սուլթանին , սա կռեց մի դաշնագիր որով սասխին յանձնեց Պայագիտն : Անկիւթա ընդդիմացաւ , և Չարն բռնադատուեցաւ հրաժարիլ Պայագիտէն , թէեւ քաղաքի տէրն ժառանգորդ կարգած էր 'զայն : Երբ Ռուսն մի այսպիսի ընդունելութիւն կը գտնէր , Հայն կրնա՞ր ակնկալել որ սլսակուէին իւր բուր իւճեր :

Հայաստան իրաւունք ունէ՞ր ստանալ վարչական ինքնօրինութիւն , 'զոր Եւրոպա զլացաւ Կրետէի , կամ ընդունա՞կ էինք մի ինքնօրէն կեանքի , մեք որ գիտակից եմք մեր վիճակի . դոքա խնդիրներ են որովք չ'եմ ուղեր դրադիլ :

Այլ կը փութամ յաւելել թէ Եւրոպա , վարչական ինքնօրինութիւն զլանալով մեզ , շնորհեց սակայն մի յօդուած որ կրնայ աստիճանապէս տանիլ ըզ մեզ ուր կը ցանկայինք հասնիլ : « Բարձրագոյն — Ռուսն յանձն կ'առնու անյապաղ իրացունել այն բարեօրումներ եւ բարէնօրոգումներ 'զորս կը պահանջեն տեղական պէտքերն Հայերէ բնակուած նահանգներին մէջ . յահա մի պարբերութիւն որ կրնայ աւետել , ապագային համար , մի վարչական ինքնօրինութիւն :

### ԺԱ.

Ներսէս Վարժապետեան , իւր վսեմողի իտրահրդ ականներ և հայրենատենչ օտարներ անխընայ աշխատեցան ազգային դատին համար . Խրի-



մեան և Նար Այ յարձեցան երկար ամիսներ :  
Ստեփան Փափաղեան , որ հղորապէս աջակցեցաւ  
մեզ Ալբրիխի մէջ , նի՛նար վերադարձաւ աստ , և  
Մինաս Չերազ հիւանդ :

Այսպէս ճգնեցան ազգի զաւակներն մի աս-  
ժան ճգնած ասի մէջ . այլ ազգն պարտաւ որ է աշ-  
տուհեաւ բիւրապատկել իւր ճիգեր , որպէս զի  
կարենայ հասնիլ իւր նպատակի :

Եւրոպա իրաւունքներ տուաւ մեզ , այլ դորա  
ամուլ պիտի մեան , թէ չը կարենա՞նք պաշտպա-  
նել 'զայնս : Նա զէնքեր տուաւ մեզ , այլ դորա  
պիտի հալին , թէ զանց առնու՞նք գործածել  
'զայնս :

Ալբրիխի յօդուածովն , Բարձրագոյն Գուռն  
յանձն ասաւ անյառազ բարկլաւել մեր վիճակ :

Այտք է աշխատիլ , երբ յապաղում տեղի ունենայ :  
Գուռն յանձն ասաւ իրացածնել բարկնորա-  
գումներ Հայաստանի համար : Այտք է աշխատիլ ,  
երբ դորա շ'իրանան :

Գուռն յանձն ասաւ հոգալ Գեղարձն պէտէրն :  
Այտք է աշխատիլ , երբ այդ պէտքեր սրացուին  
կամ մտածաւ , էս ընդունուին :

Գուռն յանձն ասաւ բարկնորողում ներմու-  
ծել հայերն բնակած նահանգներն թէ : Այտք է աշ-  
խատիլ , երբ մի հայարնակ նահանգ դուրս ձգուի  
չբնակակէն :

Գուռն յանձն ասաւ պաշտպանել Հայն Չէ-  
քեաներն և Քուրդերն դեմ : Այտք է աշխատիլ , երբ  
անպատիժ մնայ մի Չէքէս կամ մի Քուրդ :

Գուռն յանձն ասաւ Եւրոպայի հաղորդել Հա-



յաստանի բարեկերպութիւն համար յետ անստան  
ճշգրտեմք : Պէտք է աշխատիլ, երբ որքան թուղթի  
վրայ են միայն կամ շափաղանցում :

Գուռն խոստացաւ հարկաւ որ բարեկերպութիւն  
ներն, և պետութիւններն պիտի սկսն որպէս զի այդ  
խոստում զործադրուի : Պէտք է աշխատիլ, երբ  
նորա շր սկեն կամ թերի կերպով սկեն :

Վեհաժողովն լուս մնաց երբ Շուվալով եւրո-  
պական մասնախումբ յիշատակեց Հայաստանի  
համար ալ. թէ Անկլիա շր բարեկերպ է հայ նա-  
հանգներն, այդ մասնախումբ հարկաւ որ պիտի լի-  
նի մեզ : Պէտք է աշխատիլ, երբ Եւրոպա վանայ  
մեզ 'գայն :

Մայիս 25ի պայմանագիրովն, ասիական Տաճ-  
կաստանի քրիստոնեայներն խոստում առին թա-  
ղութեն և Սուլթանեն որ լուս վարչութիւն ե-  
րաշխարհութիւն վայելեն : Պէտք է աշխատիլ, երբ  
Հայն դուրկ մնայ ի սոցանէ :

Եւրոպա հաւաքապէս եւ Անկլիա անհատա-  
պէս զործուենեալով եփրատեան հովիտին մէջ,  
Անկլիա պիտի ջանայ պաշտպանել իւր շահ ամեն  
հակառակորդ շահի դէմ : Պէտք է աշխատիլ  
ճարտարապէս, որպէս զի Հայն, ճարակ տալով  
այս մրցումի, հիմնական օգուտներ քաղէ ի  
նմանէ :

Պէտք է միարան աշխատիլ հայ հայրենիքին  
մէջ, օսմանեան ստանին մէջ, եւրոպական աշ-  
խարհին մէջ, մեր իրաւունք պահանջելով այն  
ազգերէ որք հայ ինքիրն ճանաչեցին պաշտո-  
նապէս եւ դարերէ ի վեր մուցում հայ ա-



նունն անմահացուցին մի հանգիսաւոր դաշնաւ  
գիրի մէջ :

Կոստանդնուպօլիս , մի տիրացուական կո-  
ուանի վրայ աջակողմի և ձախակողմի եսութիւն-  
ներն մարելով , աջով Հայաստանի և ձախով  
Ներոպաի համար պարտաւոր է գործել այսու-  
հետեւ , զի հարկ է մին քաղաքական կեանքի  
պատրաստել և միւսի ուշն հրաւիրել մեր վրայ  
ազդու միջոցներով :

Անհրաժեշտ է զօրացունել Արարատեան ըն-  
կերութիւնն և իւր նմաններ , և վառ պահել  
այն յարաբերութիւններ 'չորս առաջին հայ  
պատուիրակութիւնն հաստատեց եւրոպական  
դահլիճին , ժողովուրդին և մամուլին հետ :

Ահա մի սկայ և բեղուն գործ , ում պէտք է  
ձեռնարկել հաւատով :

Նոքա , որք վհատութիւն կը սփռեն ազգին  
մէջ , Ձերգէտներէն և Քուրդերէն աւելի վնասա-  
կար կը լինին նմա , զի անյուսութիւնն , ամեն  
թռիչ անդամալուծելով , կրնայ սպանել մի ազգ :

Այլ ժողովուրդն , որ , ըստ Յիսուսի , նշան  
իւրիւն , կը հարցնէ մերթ . Ո՛ւր է ԿԱ, յօդուածի  
գործնական արդիւնն , Կը պատասխանեմ թէ ,  
մեր յօդուածէ յառաջ , վաթսուն յօդուածներ  
կան . միթէ նոքա գործադրուեցա՞ն ամբողջա-  
պէս : Նախ հզօրներն պիտի առնուն իւրեանց  
բաժիններ , եւ ապա տկարներն , ճիգ թափե-  
լով . դա է օրէնն աշխարհի :

Որպէս զի մարմնանայ ԿԱ յօդուածն , ամեն  
անհատ պարտաւոր է զոհողութիւններ յանձն



առնուլ : Ո՞ւր են դորա :

Ուրեմն , ոչ ոք իրաւունք ունի գանդատիլ ընկերին դէմ : Թող ամեն Հայ իւր անձի դէմ բողոք բառնայ :

Պէտքինի Վեհաժողովէն մի ոսկէհանք շահեցանք . մեզ անկ է խիղախել եւ հանել ոսկին :

## ԺԲ.

Բարձրաշնորհ Պատրիարքն , մի Հայ պատուիրակութիւն յղելով Եւրոպա , կատարեց մի դործոր օգտակար եղաւ ազգին նիւթապէս եւ բարոյապէս :

Պատմեցի արդէն մեր նիւթական օգուտ , 'զոր մեզ կը մնայ արդիւնաւորել :

Գալով մեր բարոյական օգուտի , որ անհուն եղաւ արդարեւ , մի ուրիշ հատոր պիտի պատմէ 'զայն :





## ՅԱԻԵԼՈՒԱԾ

---

Երբ հրատարակեցի ներկայ տետրակն , ըմ գ-  
ղիմադիր կուսակցութիւնն անձիս և գրուածիս  
դէմ յարձակեցաւ կատաղի յօղուածներով : Ես  
լռութիւն պահեցի , և աղգիս յանձնեցի պաշտ-  
պանել իմ դատ , զի նմա նուիրուած են գրիչս  
և կեանքս :

Շնորհակալ եմ ժողովուրդէն — Նա պաշտ-  
պանեց անձս , Հայաստանին երեսփոխան ընա-  
րելով 'զայն . նա պաշտպանեց գրուածս , երկ-  
րորդ տիպի արժանացունելով 'զայն :

Հասցիւղս\_ԱԾ օ ե Է - Ե ե մ ր ե ր 1878 .

ՀԵՂԻՆՆԵՆ

---



## Ց Ա Ն Կ



Զօն . . . . .	5
ՆԱԽԱԲԱՆ . . . . .	5
ԹԷ ԻՆՉ ՇԱՀԵՅՑԱՆԻ ՊԵՐԼԻՆԻ ՎԵՀԱ- ԺՈՂՈՎԷՆ . . . . .	7
ՅԱԻԵԼՈՒԱԾ . . . . .	30
















~~100-100~~ 2p

23544

23545



